ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Անհրաժեշտ է թեստ-գրքույկի առաջադրանքները լուծելուց հետո ուշադիր լրացնել ձևաթուղթը. թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Ուշադիր կարդացե՛ք ձևաթղթի լրացման կանոնները:

1-10 առաջադրանքները ընտրովի պատասխանով են. ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

11-16 առաջադրանքներից և 17, 18 առաջադրանքների ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր. պահանջին կարող են համապատասխանել մեկից ավելի թվեր: Ձևաթղթում դրանց համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքների համար 1 միավոր կարող եք ստանալ այն դեպքում, եթե ճիշտ են արված բոլոր նշումները:

19-30 առաջադրանքներում պահանջվում է նշել 3 ճիշտ պատասխանները: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1-ական միավորով, այսպես, եթե Ձեր 3 նշումներից 3-ն էլ ճիշտ են, վաստակում եք 3 միավոր, 2 ճիշտ նշման դեպքում՝ 2 միավոր, 1 ճիշտ նշման դեպքում՝ 1 միավոր: Նշումները պետք է կատարել միևնույն եղանակով՝ համարներին համապատասխանող վանդակներում դնելով X նշանը, սակայն տվյալ առաջադրանքի տողում ***չի կարելի կատարել 3-ից ավելի նշում:*** *Միևնույն տողում ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 3 նշումներ:*

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում գրության սխալ *չկա:*** *(1 միավոր)*

1) ճրագալույց, փռփռալ, խավյար, մաղթանք
2) նշդարենի, անընտգյուտ, անդորագիր, ամբարձիչ
3) շիճուկ, խարխափել, խրտվիլակ, մարմարակուռ
4) անբարյացակամ, անկոտրուն, հեղհեղուկ, կոթնել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:** *(1 միավոր)*

1) կապկել, ընդեղեն, զարթուցիչ, արևահեռ
2) բնագետ, կենսախինդ, անկապտելի, ատյան
3) սփռոց, զմռսել, շինծու, վիմափոր
4) չվերթ, կանխակալ, զրահապատ, բլթակ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:** *(1 միավոր)*

1) թալկանալ-նվաղել, պառակտել-բաժանել, բանսարկել-զրպարտել, քիվ-խոյակ
2) քրթմնջալ-տրտնջալ, զազրանք-խորշանք, ունայն-խորունկ, բանադրել-նզովել
3) հողմակոծ-փոթորկածուփ, ընդարմանալ-անզգայանալ, քմահաճ-կամազուրկ, մախմուր-թավիշ
4) գրգիռ-ազդակ, ամուլ-անպտղաբեր, տատամսել-վարանել, խորշակ-սամում

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանց կա:** *(1 միավոր)*

1) մոլի, տարերք, ազդու, համերգ
2) հենակ, գուշակ, հեղձուկ, դիպված
3) տրամադիր, պարագա, կտրոն, խախուտ
4) խթան, գետնատարած, հավաստի, կիրք

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:** *(1 միավոր)*

1) սրճեփ, ոտնաձայն, նավթամուղ, կարկղամորթ
2) տեսակետ, խաչակիր, տոնածառ, սկյութ
3) հորաքույր, թռչնորս, ցուցամոլ, հովիար
4) երկնաքեր, տարեցույց, պատճեն, հարթաչափ

6 **Ո՞ր նախադասության մեջ կան մեկից ավելի անկանոն բայեր, որոնք տվյալ ժամանակաձևում անկանոնություն են դրսևորել:** *(1 միավոր)*

1) Ձեռքիս խաչբուռը առան Ու վրաս խաչ քաշեցին,
   - Քոնն է աշխարհը,- ասացին, Տանս քարերը տարան:
2) Քունս չի տանում. Հոգիս դուրս եկավ Լավ քնողներին երանի տալով:
3) Նստել, արածիս վարձին եմ նայում, Գժված գլուխս ափիս մեջ առել, Անցած օրերիս դարձին եմ նայում:
4) Թող աստված եղածը պահի, Եվ հետո ինչ էլ պատահի, Ձյուներդ հայերեն են լալու:

7 **Ո՞ր տարբերակում է նախադասության անդամներից 2-ի ձևաբանական վերլուծությունը ճիշտ:** *(1 միավոր)*

Եվ ինչո՞ւ չպետք է վստահ լինել մեր փոխադարձ համակրանքի մեջ, քանի որ տարիների ընթացքում մի վայրկյան իսկ չեղավ, որ մեր հոգիները իրարից դժգոհ լինեին, երբևէ չեղավ, որ մի չնչին խոսքով մեկմեկու վիրավորեինք կամ նեղացնեինք:

1) **իսկ**– համադասական շաղկապ, **նեղացնեինք** – պատճառական բայ
2) **չպետք է վստահ լինել** – հարկադրական եղանակ, **մեկմեկու**– փոխադարձ դերանուն
3) **չեղավ**– չեզոք սեռի բայ, **հոգիները**–*ի* արտաքին հոլովման գոյական
4) **վիրավորեինք**– ըղձական անցյալ, **երբևէ**– անորոշ դերանուն

8 **Ո՞ր տարբերակում է նախադասության ընդգծված անդամի շարահյուսական պաշտոնը ճիշտ տրված:** *(1 միավոր)*

1) Երեխան երկու ձեռքով պաշտպանվում էր **հարվածներից**: *(ներգործող խնդիր)*
2) Փոքրիկ հովիվն ասաց, որ մայր ձիու սիրտը պայթել էր **զզվանքից** ու կատաղությունից: *(անջատման խնդիր)*
3) Վարդանի զորագունդը հարձակվեց **թշնամու վրա**: *(հանգման խնդիր)*
4) Նա այդ օրը ինձ նայեց սառը **հայացքով**: *(միջոցի խնդիր)*

9 **Ո՞ր նախադասության մեջ պետք է 3 բութ դնել:** *(1 միավոր)*

1) Պատշգամբ դուրս գալիս վարպետը մի հայացք նետեց հանդիպակաց լեռնաշղթաների արևից ոսկեորված կատարներին և ծանր հոգոց հանելով իջավ սանդուղքներով:
2) Մղձավանջային անհեթեթ խաբկանք էր թե դժոխային իրականություն դժվար է ասել կամ գուցե երազ էր խաբուսիկ ցնորամիտ ողջ քաղաքը թվում էր ճոճվում է:
3) Մի արևակեզ օր կեսօրին սիրահար քամին սահելով փարավոնների բուրգերի վես ճակատների վրայով վար իջավ ու շունչը կտրած փռվեց արմավենու Նեղոսի ջրերով ողողված ոտքերի տակ:
4) Շատ մոտիկ մեր գլխավերևում հենց բլրի գլխից մի ձայն լսվեց հեյ:

10 **Ո՞ր տարբերակում է նախադասության ընդգծված բաղադրիչի տեսակը սխալ նշված:** *(1 միավոր)*

1) **Հիմա էլ կան այդ մառաններից մի քանիսը**, ու երբ անցնում եմ դրանց պատուհանների մոտով, մշտապես զգում եմ հին գինիներին բնորոշ բուրմունքը: *(գերադաս)*
2) Սերունդը փոխված էր. **իր տեսած առաջվա մարդիկ չկային:** *(լիակազմ)*
3) Զարմանում եմ, **թե ո՜վ Շռայլ, ինչքան շատ ես տվել ինձ:** *(երկկազմ, թերի)*
4) Զբոսաշրջիկների համար ամենագրավիչ վայրերից մեկն է դա. **բարձրանում ես վեհաշուք լեռան գագաթը,** և բացվում է շքեղ մի տեսարան: *(անենթակա)*

11 **Բառերից կամ բառակապակցություններից որոնցո՞ւմ գրության սխալ կա:**

1. ֆիլմ-օպերա, 2. սրբություն սրբոց, 3. Լուսաստող մոլորակ,
4. խաչակրաց արշավանքներ, 5. հարյուրտոկոսանոց, 6. հականե հանվանե,
7. Ազգերի լիգա, 8. ինչ-որ է, 9. Մարկոս Ավետարանիչ

12 **Ո՞ր բառերում հնչյունափոխություն *չկա:*** *(1 միավոր)*

1. քառակուսի, 2. կրակագիծ, 3. ձանձրույթ, 4. ստահող, 5. այգաբաց, 6. աղվամազ,
7. եկեղեցական, 8. անթացուպ, 9. դեռափթիթ

13 **Ո՞ր բառազույգերի բառերն են հոմանիշներ:** *(1 միավոր)*

1. մախաղ-հերյուն, 2. արտորանք-աճապարանք, 3. պախարակել-նախատել,
4. աչառու-անկշռադատ, 5. անշահ-ժուժկալ, 6. եղրևանի-մայրի, 7. շողոմ-երեսպաշտ,
8. դեգերել-հածել, 9. հորձանուտ-անձայրածիր

14 **Ո՞ր դարձվածքներն են սխալ բացատրված:** *(1 միավոր)*

1. **խարիսխ գցել**-բնակություն հաստատել
2. **Ադամի արհեստ**-հողագործություն
3. **լեզվի տակ ընկնել**-խոսքը ընդհատել
4. **լեզու որսալ**-դիմացինի թաքուն մտքերը կռահել
5. **տրոյական ձի**-գաղտնի՝ քողարկված միջոց՝ նպատակին հասնելու համար
6. **գայլի ավետարան**-ապարդյուն խրատ
7. **դուռը կտրել**-որևէ պահանջով ներկայանալ
8. **երկնային դատավոր**-ազնիվ և բարեսիրտ մարդ
9. **թևի տակ մտնել**-մեկին հովանավորել

15 **Ո՞ր բառերը կազմությամբ բարդաձանցավոր *չեն:*** *(1 միավոր)*

1. կարմրակտուց, 2. դարչնագույն, 3. դառնաղի, 4. դասալիք, 5. ձեռնոցագործ,
6. հրամանատար, 7. մեծաքանակ, 8. ջրտուք, 9. ակնահաճո

16 **Բառերից որո՞նք ունեն միայն մեկ խոսքիմասային արժեք (պատկանում են միայն մեկ խոսքի մասի):** *(1 միավոր)*

1. նախքան, 2. այնուամենայնիվ, 3. կարծես, 4. հենց, 5. ինչպիսի, 6. շնորհիվ, 7. մեկ,
8. եթե, 9. անկախ

17 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:**
(9 միավոր)

1. Հանգչում էր քաղաքի աղմուկը. դաշտ էր կարծես անծայրածիր, ուր լուսաբացին առաջին մեքենայի աղմուկից սկսվել էր ճակատամարտի ժխորը, կեսօրին չափազանց թեժացել: 2. Երեկոյան պոնձագործները հավաքել էին պղինձը, դարբինները դարսել էին մուրճերը, լռել էին մեքենաները:

3. Երեկոյի տաք անձրևը արդեն ծաղկող ծառերին, մայթի քարերին, ծանր կավահողին բաշխել էր զով, պղտոր ջրի լճակներ ու ծանր ցեխ: 4. Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք և անգլուխ քարավանի նման դանդաղորեն ու մունջ պտույտ էին անում փողոցներով, տների կտուրներին քսվելով՝ անցնում:

5. Բարձր հարկերը բոլորովին չէին երևում ամպի սպիտակ քուլաների մեջ. նրանք օրորվում էին, իրենց հետ օրորում հեռագրասյուները, էլեկտրական լամպերը, նաև նրանց ցոլքը՝ անձրևաջրի պղտոր լճակներում:

6. Ամբողջ քաղաքի վրա բարձր աշտարակից ռադիոն թափում էր գարնանային երգի տաք ելևէջներ: 7. Աշտարակում ինչ-որ աղջիկ մաքուր ձայնով երգում էր բամբակի դաշտերի, հասունացած արտերի երգը: 8. Բազմաթիվ բարձրախոսներ այդ զվարթ երգը մաղում էին քաղաքի վրա, իսկ դրանց տակ խումբ-խումբ մարդիկ ուշադրությամբ լսում էին՝ մշակը՝ հենված պատին, լրագրավաճառը՝ թերթերը թևի տակ, տղան՝ աղջկա թևը գրկած: 9. Նույնիսկ ձիերը կախել էին ականջները. նրանք էլ անշարժացած լսում էին:

1. և՛ չեզոք, և՛ ներգործական սեռի բայ ունեցող նախադասություն(ներ)
2. սոսկածանցավոր բայ ունեցող նախադասություն(ներ)
3. կապ ունեցող նախադասություն(ներ)
4. դերանուն ունեցող նախադասություն(ներ)
5. անկախ դերբայ ունեցող նախադասություն(ներ)
6. մակբայ ունեցող նախադասություն(ներ)
7. վերաբերական ունեցող նախադասություն(ներ)
8. *ա* ներքին հոլովման ենթարկվող գոյական ունեցող նախադասություն(ներ)
9. շաղկապ ունեցող նախադասություն(ներ)

18 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:**
(9 միավոր)

1. *1906 թվականին Կոմիտասը ուղևորվեց Փարիզ՝ աշխարհի արվեստների կենտրոնը:* ***2.*** *Ֆրանսիայի մայրաքաղաքը յուրօրինակ փորձաքար էր այն արվեստագետների համար, որոնք համաշխարհային հռչակ ձեռք բերելու էին ձգտում:* ***3.*** *Ինչպե՞ս կընդունեն երաժշտական հրավառություններից հղփացած քաղաքը անհայտ ժողովրդի անհայտ զավակի երգը:*

4. *Կոմիտասն օրնիբուն աշխատում էր՝ քաջ գիտակցելով, որ իր արվեստով օտար ունկնդրին հաղորդակից պիտի դարձնի Հայաստանի և հայ ժողովրդի՝ մինչ այդ աշխարհին անծանոթ մշակույթին:*

5. *Հանդիսության կազմակերպիչների հրավերով ներկա են ֆրանսիացիների՝ այն ժամանակվա կուռքերը՝ ճանաչված երաժիշտներ, որոնք մեկը մյուսի հետևից հանդես են գալիս և արժանանում բուռն ծափահարությունների:*

6. *Հերթը Կոմիտասինն էր. դահլիճը մի վայրկյան ապշեց. այս հոգևորականը՝ սև սքեմով ու վեղարով, ինչպե՞ս պիտի դիմանար համաշխարհային աստղերի մրցակցությանը:*

7. *Արտաքուստ հանգիստ՝ Կոմիտասը կանգնեց՝ ներքուստ զգալով սրտի տրոփյունը, ու մեղմահնչյուն, թավշյա թրթիռով կարկաչեց երգը, որ պատմում էր իր ժողովրդի դժխեմ բախտի մասին, և նրա ելևէջները թափանցեցին ունկնդիրների հոգու զաղտնարանները:*

8. *Դահլիճը զարմանքից քարացել էր. ասես ննջում էր ընդարմացնող նիրհով, մինչ հետզհետե մարեցին թախծոտ երգի հնչյունները դահլիճի կամարների տակ:* ***9.*** *Ու հանկարծ պայթեց քար լռությունը՝ իր տեղը զիջելով պոռթկուն հիացմունքին ու որոտընդոստ բացականչություններին:*

1. ուղիղ խնդիր ունեցող նախադասություն(ներ)
2. բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)
3. տեղի պարագա ունեցող նախադասություն(ներ)
4. հիմունքի պարագա ունեցող նախադասություն(ներ)
5. բացահայտիչ ունեցող նախադասություն(ներ)
6. բազմակի անդամներ ունեցող նախադասություն(ներ)
7. զեղչված ենթակա ունեցող նախադասություն(ներ)
8. հանգման խնդիր ունեցող նախադասություն(ներ)
9. դերբայական դարձված ունեցող նախադասություն(ներ)

19 **Հատվածներից 3-ում դարձվածք կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Չվող թռչուններն անցան գնացին
   Շարան առ շարան…
   Մնացողները կծիկ են դառնում
   Թրջվելու վախից
   Եվ կամաց-կամաց բներն են քաշվում:

2. Թեքվող օրվա հետ թեքվեցին կարծես,
   Ամպ ու ժպիտներ փոխանակեցին
   Եվ մոտենալով սիրտ տվին իրար
   Իրար շվաքից խրտնած սարերը:

3. Ծիածանները լռած երգեր են,
   Լռած խոսքեր են աղոթքների,
   Եվ կածանները ոտնահետքեր են
   Վաղուց հող դարձած ճամփորդների:

4. Ու ես եկա… Ասում են, թե
   Թոնրի շուրթին ուշաթափվեց
   Խրտնած շողը լուսնյակի,
   Լուսաբացի մի պատառիկ,
   Երդիկն ի վար թրթռալով,
   Ընկավ մորս հոգնած բարձի
   Եվ իմ անհոգ բախտի վրա:

5. Գալիս ես որպես իրարանցում
   Եվ անց ես կենում որպես երազ.
   Կյա՛նք իմ, դո՛ւ ձրի ներկայացում,
   Բայց ինչքան թանկ ես նստում վրաս:

6. Կիսարթուն քամին կտուրից թռչում,
   Ցանկապատին էր հենում կռնակը:
   Անթեղի վրա կատուն էր ննջում,
   Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը:

7. Տո՛ւր ինձ քո ոգին, քո միտքը ներհուն,
   Ա՛ռ ինձ հանճարեղ քո տարերքի մեջ,
   Որ չմոլորվեմ քո ոլորտներում
   Եվ իմ հոգու բարդ տիեզերքի մեջ:

8. Արտույտներն ինձ արտ կտանեն,
   Կկանչեն կկուներն անտառ,
   Կաքավը շաղ-կղա կասի,
   Տարիքս մոռանալ կտա:

9. Թռչեի թրջված հավքի ետևից
   Եվ չբռնեի մինչև իրիկուն…
   Հարցնեի հողից, ջրից, աստղերից,
   Գտնեի կածանն ու դառնայի տուն:

20 **Բառերից 3-ի բացատրությունը սխալ է: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. **խոտհարք** – մարգագետին, որի խոտը հնձում են և չորացնում որպես ձմեռվա անասնակեր
2. **պատմուճան** – զգեստի տակի կողմից կարված կտորը
3. **ստահակ** – սուտ՝ մոլոր բաների հակում ունեցող մարդ
4. **անթեղ** – կրակախառն մոխրակույտ
5. **ճամարտակ** – փքուն, բայց բովանդակազուրկ ոճով խոսող
6. **սնգույր** – ողորկ ու փայլուն երեսով գործվածք
7. **դրանիկ** – դռան շեմք, շրջանակ
8. **ճարմանդ** – կեռ, որ, մտնելով օղի մեջ, մի իրը կցում է մյուսին
9. **սիրեն** – հմայիչ երգով ուղևորներին կախարդող և կործանարար տեղեր տանող ջրահարս

21 **Շարքերից 3-ում բառերից ոչ մեկի ոչ մի արմատին *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***-ատ*** – ընդհանուր, գանգոսկր, գրկաբաց
2. ***-ան*** – նետաձիգ, զուգապար, գերեվարում
3. ***-ակ*** – կրափոշի, երկարածոր, ավազան
4. ***-անք*** – քամահրելի, ներշնչել, մարզպան
5. ***-ոն*** – ոսկեծամ, քանակ, աստղալից
6. ***-ովի*** –քաջակորով, ամանոր, կարեվեր
7. ***-ույթ*** – եզնալուծ, հաստատել, վարարուն
8. ***-ք*** – տարկետում, խորհրդանիշ, կամարաձև
9. ***-ուկ*** – ծածկալեզու, դիպակազգեստ, բազմակետ

22 **Բարդ համադասական նախադասություններից 3-ի բաղադրիչ նախադասությունների իմաստային հարաբերությունները սխալ են բնորոշված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Գնդացիրների ձայնը վաղուց է կտրվել, կտրվում են նաև հրանոթների որոտները: *(միավորիչ)*
2. Ոչ միայն տանկերն էին վառվում, այլև ինքնաթիռներն էին լուցկու նման բոցավառվում: *(հակադրական)*
3. Արևամանուկի մազերը հրաշեկ էին, այսինքն՝ կրակի գույն ունեին: *(մեկնական)*
4. Ո՛չ շեփորը լսվեց, ո՛չ էլ որևէ ձայն հասավ զորագնդին: *(միավորիչ)*
5. Ներս մտնող հաճախորդին առաջարկում էին թեյ կամ մոտակա սրճարանից բերել էին տալիս մի գավաթ սուրճ: *(տրոհական)*
6. Հոբելյանական այդ խաղը դիտելու հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող գեներալների, իսկ իրեն մոռացան: *(հակադրական)*
7. Վերի թաղի բնակիչները փախել էին քաղաքից խճուղու ճանապարհով, այնինչ Տելեֆոն Սեթոն որոշեց կայարանով գնալ: *(մեկնական)*
8. Ձորում՝ գետի ափին, աղջիկների մայրը, գլուխը ծնկներին, ոչ այն է նիրհում էր, ոչ այն է տխրում ջրերի վրա: *(միավորիչ)*
9. Մնում է մի ուրիշ հնար. այն է՝ քեզ փախցնել այստեղից: *(մեկնական)*

23 **Նախադասություններից 3-ի գծապատկերում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Նա ուզում էր անպայման շարունակել որոնումները, բայց ոտքերն այնպես էին դողում, սիրտն այնքան արագ էր զարկում, աչքերին այնպիսի մշուշ էր իջել, որ ստիպված եղավ կանգ առնել:



2. Իրենց միջև տեղի ունեցած վերջին զրույցից նա եզրակացրեց, որ Աստղիկը ոչ թե նրանից էր տանջվում, որ Միքայելն իրեն այլևս չի սիրում, այլ տառապում էր, որ վերջինս սիրում է իր ընկերուհուն, որի արժանիքներն իրենից ցածր են:



3. Եթե արևի շողքը թափանցում էր ներս, տիկին Անահիտը դժգոհում էր, թե շողքը աչքերը ցավեցնում է, և սպասավորին ցույց էր տալիս վարագույրը, որը ընկնում էր օդակից ու ծածկում լույսը:



4. Ավտոմեքենան, որ գիշերը մնացել էր ծառի տակ, որովհետև գավառական քաղաքում դեռ ավտոտնակ չկար, հաջորդ առավոտ նորից զիլ կանչեց, փնթփնթաց, ինչպես ձին էր վրնջում հեծյալին տեսնելիս, և փափուկ անիվները գլորելով՝ սուրաց առաջ:



5. Վահրիճ Պալունին, որ շատ ոգևորված էր սպարապետի հանձնարարությունից, երբ մի փղի ջղերը կտրտել էր ու նրան փախցրել, նկատեց մի փիղ, որ զարդարված էր մետաքսյա ոսկեծոպ ծածկոցով, և զգուշորեն սողալով փղի տակ՝ դաշույնը հապշտապ խրեց նրա փորը:



6. Հովիվը խիստ մտահոգ էր, որովհետև եթե գառները առավոտյան մարգագետին քշի, իրեն կնախատեն, և որոշեց բլրալանջ տանելու փոխարեն պահել ծովափին, որ ո՛չ ինքը չարչարվի, ո՛չ էլ՝ գառները:



7. Հենց որ հակառակորդի զինվորները առաջ շարժվեցին, մեր հրետանին, որ կազմուպատրաստ սպասում էր խրամատներում, որ պատրաստել էին նախօրեին, ուժեղ համազարկ տվեց, և թշնամի զորքերը իսկույն հետ փախան՝ դաշտում թողնելով հսկայական կորուստներ:



8. Թեև հրշեջների խումբը իսկույն շրջապատեց վառվող աշտարակը և իր բերած ջուրը թափեց նրա վրա, սակայն կրակը հանգցնել չկարողացավ, որովհետև այն բավական տարածված էր, և իրենց ունեցած ջրի պաշարն էլ շատ քիչ էր:



9. Երբ Աշոտ Երկաթի գալն իմացավ, Բեշիրը, որ ձգված էր իր զարդարուն վրանում, շատ ուրախացավ և հրամայեց, որ շքաղիր խմբեր գան ու իր վրանը պատեն, որպեսզի հայոց թագավորն իրեն տեսնի շքեղության մեջ:



24 **Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչների բնույթները սխալ են տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Սա, որ ծառա է և պարտավոր է ծառայել մեզ միշտ, մեզ է դարձրել իր անարգ ծառան: *(բացահայտիչ)*
2. Արհամարհված ու ծաղրված էր նաև նրանցից, ովքեր իր շնորհիվ էին բարձր դիրքի հասել: *(ներգործող խնդիր)*
3. Ապրիլյան մի առավոտ, երբ լռահավի որս էի անում ճահիճներում, ուշադրությունս գրավեց եղեգնուտի ափին կանգնած մի բադ: *(ժամանակի պարագա)*
4. Իսկ սառնամանիքն այնպիսին էր, ինչպիսին ես՝ այս վայրերում ծնված մարդս, չէի տեսել: *(որոշիչ)*
5. Երեկ այդպես վարվելու պատճառով դու անշուշտ քաշվում էիր նրանից՝ արդյոք պատշաճի սահմանը չանցար առաջինը սեր բացատրելով նրան: *(անջատման խնդիր)*
6. Պապս միշտ հպարտանում էր, որ գյուղում ամենից շատ բերք իր խնձորենիներն են տալիս: *(միջոցի խնդիր)*
7. Շուրջն այնպես լուռ է, որ կարծես ողջ քաղաքը քնած է: *(ձևի պարագա)*
8. Հայացքը նրա, ում պիտի որ դու Ըստ հին օրինաց եղբայր կոչեիր, Հայացքը նրա դողում էր հիմա: *(հանգման խնդիր)*
9. Պատահել է մեզ տեսնել հին փողոցներ, որտեղ ամեն քայլափոխի մի բան գրավել է մեր անզբաղ ուշադրությունը: *(որոշիչ)*

25 **Նախադասություններից 3-ում կետադրական սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Սենյակում միայնակ նստած՝ սպասում էր ծերունի Արբակը, իսկ կից սենյակում՝ Հուսիկը՝ Սամվելի սպասավորը:
2. Այցելուն ոչինչ չէր խոսում. կարծում եմ՝ զղջում էր իր՝ չարամտորեն գործած արարքի համար:
3. Մեզանից հարյուրավոր տարիներ առաջ՝ շատ ու շատ հեռու՝ ծովերի ու օվկիանոսների մյուս ափին, կար մի աշխարհ՝ չքնաղ ծաղիկներով:
4. Իշխանն անպատիվ բան էր համարում, ինչպես ինքն էր ասում, որ կանացի շորերով սև սքեմավորները խելք ու վարք սովորեցնեն իրեն:
5. Որպես անտառի եղնիկ վազում է Քրիստինեն պարտեզի կածաններով, բարձրանում տան վերևի հարկը և բաց անելով լուսամուտը՝ նայում ներքև ու ծիծաղում:
6. Գևորգ իշխանը, տեսնելով Գոռին, ակամա կանգ առավ և սկսեց դիտել դեռափթիթ որդու գեղեցիկ դեմքը, որ, գլուխը մի կոճղի հենած, մրափում էր՝ մի խաղաղ նիրհով:
7. Սենյակիս լուսամուտից բացվում է հարազատ բնանկար՝ լեռներ են, բարդիներ, իսկ ներքևում՝ կանաչների մեջ կորած ուրախ ձորակում, աղմկում է մի փոքրիկ գետակ:
8. Տեսնելով Վասակին անձով փոքր (սպարապետը միջահասակից ցածր, փոքրամարմին տղամարդ էր) Շապուհը՝ այդ գոռոզ ու նենգամիտ բռնակալը, արհամարհանքով զննեց նրան:
9. Ով էր նա, ում աղջիկն էր, որտեղ կարելի էր տեսնել կամ ծանոթանալ նրա հետ՝ այս հարցերը մեծ մտատանջություն էին պատճառում երիտասարդին:

26 **Բարդ ստորադասական նախադասություններից 3-ը ճիշտ են փոխակերպված պարզի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. *Երեխան ժամանակին նկատեց, որ կատաղած շունը մոտենում է դռանը:*
   Երեխան ժամանակին նկատեց դռանը մոտեցող կատաղած շանը:

2. *Արամը, որ զավակներից կրտսերն էր, անչափահաս լինելու պատճառով ռազմաճակատ չգնաց:*
   Արամը՝ զավակներից կրտսերը, անչափահաս լինելու պատճառով ռազմաճակատ չգնաց:

3. *Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ այդ մարզաձևում հաղթանակ են տոնում հիմնականում հայ մարզիկները:*
   Մի՞թե ձեզ հայտնի չէ այդ մարզաձևում հիմնականում հայ մարզիկների հաղթանակ տոնելը:

4. *Հենց որ բացվում է գարունը, հովիվները իրենց վրաններով բարձրանում են լեռները:*
   Հովիվները գարունը բացվելիս իրենց վրաններով բարձրանում են լեռները:

5. *Մթնաձորի անուն լսելիս Ավին լցվում էր զայրույթով, որն արտահայտվում էր կոկորդից ընդհատ ձայներ հանելով:*
   Մթնաձորի անուն լսելիս Ավին լցվում էր զայրույթով՝ այն արտահայտելով կոկորդից ընդհատ ձայներ հանելով:

6. *Այս պատանին, որ երբեք չի տեսել իր նախնիների՝ հայերի հայրենիքը, խորապես կապված է հայրենի մշակույթի ու պապենական հողի հետ:*
   Հայրենի մշակույթի ու պապենական հողի հետ խորապես կապված այս պատանին երբեք չի տեսել իր նախնիների՝ հայերի հայրենիքը:

7. *Հագարացիների վրանները, որոնք ուխտի կտրիճները վաղորոք գաղտագողի ցողել էին կիզանուտ հեղուկով, սկսեցին բոցավառվել:*
   Հագարացիների՝ ուխտի կտրիճների կողմից կիզանուտ հեղուկով վաղորոք գաղտագողի ցողված վրանները սկսեցին բոցավառվել:

8. *Աղջկա ծնողները, որոնք անբարյացակամորեն էին տրամադրված Մկրտչի նկատմամբ, կտրուկ մերժեցին երիտասարդին:*
   Մկրտչի նկատմամբ անբարյացակամորեն տրամադրված աղջկա ծնողները կտրուկ մերժեցին երիտասարդին:

9. *Թեպետ անբարենպաստ եղանակ էր, բայց արշավախումբը, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, հասավ Մասիսի սպիտակափառ գագաթին:*
   Հակառակ անբարենպաստ եղանակ լինելուն՝ արշավախումբը, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, հասավ Մասիսի սպիտակափառ գագաթին:

27 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***Ի, առ*** նախդիրները, դրական խոնարհման օժանդակ բայը (բոլոր դիրքերում), ***ը*** որոշիչ հոդը շեշտ չեն կրում:
2. ***Անբասիր*** բառը գրվում է ***ն***-ով, քանի որ ի տարբերություն ***ամբարտավան, ամբարիշտ*** բառերի՝ փոխառյալ բառ չէ. հայերենում ունենք ***բասիր*** արմատ:
3. ***Յա*** և ***յու*** երկհնչյունները հնչյունափոխվելիս կարող են դառնալ ***ե:***
4. Հայերենում գաղտնավանկը լինում է կա՛մ բառամիջում, կա՛մ բառավերջի փակ վանկում. գաղտնավանկով սկսվող բառեր հայերենում չկան:
5. ***Լուսնկա*** բառում ***ը*** չի գրվում, քանի որ այն կազմված է ***կա*** բաղադրիչով:
6. Մի շարք բառերում բառաբարդման կամ ածանցման ժամանակ բառավերջի ***ե***-ն կարող է հնչյունափոխվել:
7. ***Հինավուրց*** բառը գրվում է ***ց***-ով, քանի որ ***ավուրց*** բաղադրիչը ***օր*** բառի հոգնակի սեռականն է գրաբարում:
8. ***Հանպատրաստից*** բառը գրվում է ***ն***-ով, քանի որ նրանում առկա է ***հան(ել)*** արմատը:
9. Հայերենի բոլոր ձայնավոր հնչյունները վանկարար են:

28 **Տրված պնդումներից 3-ում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Եթե բառը սկսվում է ձայնավորով, ապա նախորդող բաղադրիչին հոդակապով չի կարող միանալ առանց բացառության:
2. Ածանցները, վերջավորությունները և այլ մասնիկներ, միանալով բառին, կազմում են տվյալ բառի զանազան բառաձևերը:
3. ***-ունք, -ություն, -եղեն*** ածանցներով կարող են կազմվել միայն գոյականներ:
4. ***-ա(գին)*** վերջածանցով կազմվում են գոյականներ և ածականներ՝ սաստկական նշանակությամբ:
5. Ոչ բոլոր դարձվածքները կարող են գործածվել ոչ միայն դարձվածային, այլև ուղիղ իմաստով:
6. Հոմանիշներ կարող են ունենալ միայն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:
7. Գրքային բառապաշարի բառերը օգտագործվում են միայն գրավոր, իսկ խոսակցական բառերը՝ միայն բանավոր խոսքում:
8. ***Բարդ, անհատ, հարկ*** բառերը ունեն իրենց համանունները:
9. Հայերենում կան ***փոխ, ներ, տար*** արմատներ և համանուն ածանցներ:

29 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բոլոր բազմապատկական և պատճառական բայերը ածանցավոր բայեր են:
2. Ժամանակակից հայերենի արդի փուլում ***անի*** և ***ենի*** սոսկածանց ունեցող բոլոր բայերը ***ա*** խոնարհման են, իսկ ***չ*** սոսկածանց ունեցող բոլոր բայերը՝ ***ե*** խոնարհման:
3. Հայերենում հոլովվում են գոյականները, առարկա ցույց տվող դերանունները, բոլոր անկախ դերբայները և փոխանվանաբար գործածված խոսքի մասերը:
4. Եզակի հրամայականում ***իր*** դիմային վերջավորություն են ստանում ոչ միայն ***ե*** խոնարհման կանոնավոր պարզ բայերը, այլև ***ա*** խոնարհման որոշ բայեր, ինչպես նաև մի քանի անկանոն բայեր:
5. Որոշ ընդհանրական մակբայներ մակբայական տարբեր իմաստներ են արտահայտում տարբեր նախադասություններում, որոշ ընդհանրական մակբայներ էլ միաժամանակ մակբայական մեկից ավելի իմաստ են արտահայտում միևնույն կիրառության մեջ:
6. Բացի դերանվանական հոլովման ենթարկվող ***ո՞վ*** դերանունից, մյուս բոլոր հոլովվող հարցական դերանունները ենթարկվում են գոյականական ***ի*** հոլովման:
7. Թվական արմատ ունեցող ոչ բոլոր բառերն են թվական:
8. Ոչ բոլոր հարադրական բայերի իմաստն է հնարավոր արտահայտել նույնարմատ համադրական բայով:
9. ***Եթե … ապա*** զուգադրական, ***թե, թե չէ, մինչդեռ*** մենադիր շաղկապները կարող են գործածվել թե՛ իբրև համադասական, թե՛ իբրև ստորադասական:

30 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բացի ***մոտ, հետ, վրա, պես, նման, համար*** կապերից, մյուս բոլոր կապերն ունեն հստակ հոլովառություն. կարող են գործածվել միայն մեկ հոլովի հետ:
2. Բացառական հոլովով դրված գոյականը կարող է հանդես գալ մի քանի խնդիրների և մի քանի պարագաների շարահյուսական պաշտոններով:
3. Բացահայտիչն ու բացահայտյալը որոշ դեպքերում կարող են դրվել ոչ միևնույն հոլովով կամ առումով:
4. Որոշ միակազմ նախադասություններ կազմված են միայն մեկ վերաբերականից:
5. Խնդրառությունը դրսևորվում է թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցություններում:
6. ***Թե***-ի զեղչումով ստորադաս նախադասությունները կարող են լինել և՛ նախադաս, և՛ հետադաս:
7. Հանգման, անջատման և միջոցի խնդիրներ կարող են ընդունել բոլոր սեռերին պատկանող բայերը:
8. Մակբայները նախադասության մեջ հանդես են գալիս որպես բայական անդամի լրացում՝ դառնալով խնդիր կամ պարագա:
9. Բարդ ստորադասական նախադասության գերադաս նախադասությունը կարող է լինել միակազմ: